եկեղեցական ուսմամբ եւ աստուածային դրոց հմտութեամբ եւ ազգային կարեւոր պատմութեամբ զարգանան եւ բարգաւաճին առ ի շինութիւն ոչ միայն անձանց իւրեանց, այլ եւ ի շինութիւն ներկայ դարուս տառապեալ եւ քայքայեալ ազգիս համար: Սորա համար բարեպաշտ եւ ուսումնասէր Աւետիս Ղուկասեան սոյն կղզւոյն մէջ կառոյց մի հոյակապ ընծայարան, որպէս զի անմխիթար գիւղական ժողովուրդին համար շնորհալի եւ ուսեալ քահանաներ պատրաստուին: Բայց Սեւանայ Վանաց ժամակարգութեան կարգն այնքան ընդարձակ է, որ չի թողուր ժառանգաւոր աշակերտաց ուսման պարապել: Եւ որովհետեւ Սեւանայ վանուց այժմեան միաբանական դասն յոյժ նուազած է, սորա համար ուսման աշակերտող տիրացուք պարտաւորեալ են սաղմոսերգութեան կարգ վարել, որով կարճի յոյժ ժամանակ ուսման եւ թերավարժ մնալով չկարեն արժանապէս քահանայական սուրբ կոչումն ընդունիլ, որով լինին պատճառ այնչափ քննադատական մեղադրանաց, եւ զիտէ՞ք, զո՞վ զնեն պատճառվան տգիտութեան քահանայից — ազգին, Հայրապետը, թեմական առաջնորդները եւ մանաւանդ վանահայրերը· յորոց շատք իրենց բուն պաշտօն թողած միայն աղաբակապետութեան պաշտօն վարեն շար մշակ լինելով նիւթական պտղոյից համար: Ահա այս ամէն զիս պարտաւոր կացուցանեն բարեփոխել ժամակարգութեան պաշտօնն Սեւանայ վանաց:

Ա· Հինգ կանոն Սաղմոսն զեղչել երեք կանոն, զոր պաշտել եւ սաղմոսել պէտք է մի կանոն առաւօտեան կանոնագլխէն առաջ եւ մի կանոն ճաշու ժամէն առաջ եւ ճաշու ժամն առանց մեծ քարոզից եւ աղօթից, որ պաշտի միայն ի մեծի պահոց:

Բ· Հարցի շարականները ըստ հին սովորութեան չկրկնել երեք անգամ, այլ միմիայն մի անգամ:

Գ· Փոխեր մինչեւ վերջին տուն չասել, այլ երկու եւ երեք տուն ասելէն յետոյ սկսել պատշաճի շարական:

Դ· Արեւագալի ժամերգութիւն միայն մեծ պահոց պաշտել:

Ե· Պահոց օրեր խաղաղական ժամ պէտք է անփոփոխ մնայ ըստ կարգին:

Զ· Նոյնպէս զեշերապահու Եկեսցէն պէտք է մնայ:

Այս չափս բաւ համարիմ եկեղեցւոյ ժամակարգութեան մասին, զոր սահմանեալ են երանելի նախնիքն մեր եւ զոր ցուցանէ մեզ տօնացոյցին կարգ, որում հետեւին ամենայն եկեղեցիքս Հայաստանեայցս եւ վաւերական համարեալ են ի բազում դարուց անտի եւ անփոփոխ մնացեալ հասեալ ի մեր ժամանակս:

Այս այսպէս յորդորելով Հայրապետական կոնդակաւ պարտաւոր կացուցանեմ նախ բարեկարգութեան նախանձաւոր Տ· Սարգիս Վ·, որոյ ժրաջան հոգածու աշխատութեամբ, հանդերձ աշխատակից միաբան եղբարց օգնականութեամբ կարողացան այսչափ շինուածոց կառուցումն յառաջ տանիլ, որոյ փառքն եւ պատիւ հաւասար է բոլոր միաբանական դասուն: Նմանապէս պարտաւոր կացուցանեմ Սեւանայ վանաց համայն միաբանութիւնն յօժարասիրտ հոգով հպատակիլ այն կարգադրութեան եւ վարել ըստ այնմ ի նոր տաւոյս սկզբէն:

Եթէ ոմանք դժկամակ լինին ես յոչ ածեմ նոցա Քրիստոսի բան, որ պատուէր ետ մեզ չլինել բազմախնդիր յաղօթելն մեր, իբրեւ հեթանոս, զի զիտէ Հայրն Ձեր, թէ զինչ պիտոյ է Ձեզ եւ ասէ նիւթ առնելով Մանդակունի Ս· Հայրապետն որչափ գեղեցիկ յօրինեալ է զինդրուածս աղօթից «Տէր, դու զիտես զպէտս եւ զկարիս մեր առաւել քան զոր խնդրեմք եւ իմանամք»: Ամենայն ուշադրութեան արժանի է Եղնիկայ վարդապետի խրատ, զոր ուղղէ առ միանձունս, «բերանք մեր հոտեալ են ի պահոց եւ լեզուք մեր ընդարմացեալ ի սաղմոսերգութիւն եւ զոր Աստուած խնդրէ զայն ոչ ունիմք, այն է սէր եւ միաբանական եղբայրասիրութիւն»: Աստի յայտնի է, թէ ի ժամանակս իւր կային վանական միաբանք եւ միաձունք, որք թողեալ զմիաբանական սիրոյ սուրբ պատուէր, անքուն տքնութեամբ յաճախէին յաղօթս եւ մերթ եւս պարծենային ի վերայ միմեանց իբրեւ առաւել հանդիսացեալ ի հոգեւորական վարս:

Եւ ես աղօթեմ վասն ձեր եւ դուք վասն իմ առ ի չլինել մեզ առանց սիրոյ աղօթարար: Այլ առաւել ունել սէր եւ սիրել եղբարց առանց երբեք կեղծաւորութեան: Գլուխ ամենայն պատուիրանաց սէր է, զոր աւանդէ մեզ սուրբ Աւետարան:

Երանելի լինիմք եթէ պինդ պահելով զայս սէրունի սրբազան պատուէր, զկեանս վարեսցուք այնպէս, որպէս հաճոյ է առաջի Տեառն, քան զպատարագ եւ զզոհ: Մաղթեմ զի վանական ուխտ Սեւանայ ունելով ժամանակ պարապոյ, այսուհետեւ ոչ միայն կրթեալ զանձն իւր յաստուածպաշտութիւն, այլ լծորդեսցէ ընդ այն զուսումն եւ զկրթութիւն, որով միայն փառաւորի նա յԱստուծոյ եւ ի մարդկանէ:

Շնորհատուն Աստուած տացէ Ձեզ շնորհ, զի դուք կարող լինիջիք հետզհետէ ի լաւ անդր յառաջադիմել եւ զովելի անուամբ հռչակել զուխտն Սեւանայ վանաց, ուր երբեմն Մաշտոց վարդապետ հանդիսացեալ էր խմաստութեամբ եւ գիտութեամբ: Եթէ դուք համարիք զայն պարծանք Սեւանայ վանաց, ուրեմն նախանձաւոր եւ հետեւող լերուք շնորհաց նորին: Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ Ձեզ ընդ ամենեսինդ»:

Սեւանայ մենաստանի հիմնադրի՝ Մաշտոց խնկելի հայրապետի յուղիչ օրինակով է կնքում Հայրիկը իւր կոնդակը· ուսման ու աղօթքի աննման միացումով մենաստանը վերածնելու քարոզն է տալիս միաբանութեան, որը խորը անտարբերութիւն ցոյց տուեց դէպ ի այդ քարոզը ու քանիերորդ դարու չէմքին Սեւանայ անապատը կնքեց իւր անապատական կենցաղը:

Գեղարքունեաց երբեմնի աղօթաւոր, ուսումնասէր աշխարհի անապատները հետզհետէ հանդել մարել էին ու Սեւանայ գեղածիծաղ լճի ափին վառուող աղօթարան ճրագները հանգել· մնացել էր Սեւանը եւ նա էլ թառամեց, թօշնեց իբր անապատ, մնալով լոկ ուխտատեղի, պատմական վայր Գեղարքունեաց աշխարհի:

Գեղեցիկ զուգադիպութեամբ տաղանդաւոր գրող Շանթը իւր «Հին Աստուածներ» դրամայում կարծես կրօնական կեանքի անկման գեղեցիկ նկարագիրն է տալիս իւր նիւթն առնելով Սեւանայ մենաստանի պատմութիւնից: Սեւանայ անապատի հիմնադիր, դրամայի կենդրոնական անձ, Մաշտոց հայրապետի-վանահօր բերանով քննադատելով այն եկեղեցին, որը կայ այժմ: Մի կողմից հնի անկումն, միւս կողմից նորի վերածնութիւնը այնտեղ ու այն մարդու բերանով, որ Թ.—Ժ· դարուն, մեզնից 1000 տարից առաջ ուժեղ վերածնութեան հիմքն է դրել:

Ահա այդ իմաստալի քարոզը հնի անկման եւ նորի վերածնութեան: Վանահայրն ասում է վանականներին·

«Մենք բոլորս ալ, որ թողեր ենք աշխարհը ու եկեր անապատ, մեր հոգիին մեզի հետ էր, երբ այս եկեղեցին կը շինէինք: Այդ ծածուկ քօղարկուած յուզումներն են շիներ այս եկեղեցին· աշխարհէն անապատ եկած, մեզի հետ ներս սպրդած աշխարհի այդ կոորն է շիներ այս եկեղեցին: Աշխարհինն է այդ եկեղեցին, մեր Աստուածունը չէ: Ատոր կամարներուն տակ մենք այլեւս աղօթել չենք կրնար, այդ կամարները պէտք է քանդուին: Մարդս ինք միայն կրնայ շինել իր Աստծուն նուիրուած տաճարը, իր մէջքովը, ձեռքերովը, իր խելքովը: Թէ ինչ ձեւ է ունենալու մեր նոր եկեղեցին, զեռ ես ինքս ալ որոշ չգիտեմ· ա՛ կը նստինք միասին ու կը խորհինք· կը խորհինք ու կը ստեղծենք[37]»:

ԳՈՒՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ

(Շարունակելի:)

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՍՏԵՄՊՈԼՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՐԵՄԻԱ ՉԵԼԵՊԻԻ ՔԷՕՄԻՒՐՃԵԱՆ

—

ԳԼՈՒԽ Զ·

(Շարունակութիւն:)

Բանկալթիի Ազգ· գերեզմանատունը շատ հին է· անոր սկիզբը մթութեամբ ծածկուած է թէեւ, բայց կենթադրեմ՝ թէ Կ· Պոլսոյ առումէն (1453) առաջ հոն կը թաղուէին Հայեր, քանի որ տեսանք (էջ 484—485)՝ թէ 14րդ դարու մէջ Գալաթիա ուներ Հայ եկեղեցի մը՝

[37] Լ· Շանթ, «Հին Աստուածներ», 114—115:

© National Library of Armenia

Ս. Սարգիս անուն յամէ 1360[1], եւ ասկէ յետոյ ալ՝ Ս. Լուսաւորիչը՝ կառուցուած 1390ին. ուրեմն կար հոն հայ բնակչութիւն, որուն գերեզմանավայրը ուրիշ տեղ չէր կրնար ըլլալ, եթէ ոչ՝ Պերայի մէջ, ուր վաղուց քրիստոնեայ միւս ազգերը ունէին իրենց գերեզմանատունները[2]։

Սոյն գերեզմանատունը նախապէս փոքրիկ տարածութեան մը վրայ ըլլալով, հետզհետէ դարերու ընթացքին մէջ ընդարձակուած է, շնորհիւ բարերարներու, որոնցմէ մէկ հատը յայտնի է մեզ եւ կը կոչուէր՝ Ղարասէֆէրեան Վանեցի։

Այս ալ կը սորվինք տապանաքարէ մը, որ կը վերաբերի Յարութիւն Ղարասէֆէրեանի, որ թոռն էր գերեզմանատունը առնողին եւ նահատակուած է 1808ին, ու կը հանգչի հոն։

Այս տապանաքարին արձանագրութիւնը, որ քանիցս հրատարակուած է[3], կը բաղկանայ 10 տողէ։ Երկաթագիր փորագրուած՝ հետեւեալն է,

Յատուկ ստացող. այս մեծ շիրմատան
Եղեւ պապ սորին. որ կայ յայս տապան
Բետոր այրընն այն. զբրով արքունեան
Եթող յիշատակ. սեռիս հայկազեան
Մինչ որ ընթեռնուք. զայս յատուկ տապան
ի ծոց իւր ունող. զՅարութիւն աղայն
Այսինքն վանցի. Ղարասէֆէրեան
Յէէն հայցեցէք. զողորմիս համայն
Թրվական Հայոց ՌՄԾԷ (1257 + 551 = 1808) փետրվարի Գ։

---

1 Տեսնել այս մասին նաեւ իմ մէկ յօդուածս՝ հրատարակուած Կ. Պոլսոյ Ժողովուրդէ Հայն օրաթերթին 959րդ թիւին մէջ, 2 դեկտ. 1921ին։

2 Երեմիա Չէլէպիի եղբօր՝ նահատակուած Տէր Կոմիտաս քահանային որդին Կոզմա քէօմիւրճեան՝ 1794ին Իտալիոյ Պասսանօ քաղաքին մէջ հրատարակած իւր "Descrizione Topografica di Costantinopoli" անուն խաղերէն աշխատասիրութեան մէջ՝ Կ. Պոլսոյ տեղագրութիւնը ընելով, երբ Պերա կը նկարագրէ՝ Պանկալթիի գերեզմանատունին մասին կը գրէ (էջ 67) հետեւեալը.

"Թաքսիմէն եաքը կը բացուի ընդարձակ դաշտ մը, ուր կը տեսնուին քանի մը ջրաբաշխական կոթողներ, եւ որ երկսեռ ժողովուրդին իբր շրջայգայութեան տեղ կը ծառայէ։ Այս դաշտը Գալատայ դաշտ կը կոչուի, որովհետեւ մեծաւ մասամբ գրաւուած է ոչ-կաթոլիկ հայերու, յոյներու, բողոքականներու, նաեւ լատինաձեւ կաթոլիկներու գերեզմանոցներով։ Ըստ որում հայաձեւ կաթոլիկները սովոր են թաղուիլ խառն կերպով ոչ-կաթոլիկ հայերուն գերեզմանոցին մէջ"։ Այս գերեզմանատունին մասին Կ. Պոլիս այցելող ուրիշ եւրոպացի ուղեւորներ ալ գրած են իրենց յիշագրութեանց մէջ։

3 Ժամանակ, թիւ 753, 1911, եւ Հանդէս Ամսօրեայ, 1911, օգոստոս, էջ 489։

Տապանագրիս սկզբնագիրները կը կազմեն "Յերեմիայէ" անունը, զոր պէտք չէ շփոթել Երեմիա Չէլէպիի հետ։

Շիրմին վերեւն ալ դրուագուած է Յարութիւնի մարմինը անգլուխ, ինքը ծնրադիր, ձեռքերուն մէջ բռնած իր գլուխը, զոր կտրած է՝ ժամանակին դահիճը։

* * *

Այս գերեզմանատունիս մասին՝ 1911ին տեղի ունեցան հրապարակային բաւական երկար վիճաբանութիւններ, որոնց հեղինակներն էին՝ Ա. Ալպոյաճեան[1], Գր. Մարգարեան[2] եւ Հ. Գրիգորիս Գալէմքեարեան[3]. առանց ասոնց վրայ յամենալու, ես կը բաւականանամ հոս արտագրել մնացած քանի մը նախնի տապանագիրներ, որոնք կրնան ապացոյց համարուիլ գերեզմանատունին հնութեանը։

Բայց նախ սա պէտք է յայտնեմ, թէ աններելի անփութութեամբ շատ շիրիմներ անհետ եղած են. Պերայի Ս. Երրորդութեան եկեղեցիին շինութեանը համար բազմաթիւ քարեր առնուած են հոնկէ, շատերն ալ գողցուած են. մինչեւ անգամ Պերայի կարգ մը փողոցներուն սալարկութեանը համար անթիւ քարեր վերցուած են, եւ այնպիսի անողորմ վանդալականութեամբ, որ այսօր իսկ տեղ տեղ հայերէն գիրերով ու թուականներով քարի կտորուանքներ կը տեսնուին Պերայի թաղա պաշի կոչուած պողոտային մայթերուն եզերքները, յամօթ ազգային իշխանութիւններու։

Այսպէս՝ ամենահին շիրմաքարը զոր գտած եմ ես եւ ինձ հետ ուրիշներ, 1551 թուականէն աւելի առաջ չ'անցնիր։ Այդ քարը որ լքուած նետուած է գերեզմանատունին մէկ անկիւնը, մէկ եւ կէս մետր երկայնութիւն ունեցող նեղկուկսեւ քար մ'է, անտաշ եւ անարուեստ, որուն վրայ տձեւ գիրերով փորագրուած է,

Այս է Տապան
Հանգըստեան
խոճայգեղցի[4]
Միսայէլին
որ նահատակեցաւ
առ Քրիստոս թվ Ռ = (1000 + 551 = 1551)։

—

1 Բիւզանդիոն, թիւ 4401—4404, 4408, 4409 եւ այլն 1911։

2 Ժամանակ, թիւ 753, 757, 761, 763, 1911։

3 Հանդէս Ամսօրեայ, 1911 թիւ յուլիս եւ օգոստոս։

4 Ո՛չ թէ խոճայգեռցի ինչպէս կարդացած է Հնոսէր։

Այս թուականաւ կայ, ուրիշ շիրմաքար մ'ալ որուն Արձանագրութիւնն է հետեւեալը,

ԹՈՒՂԴԻՔՍԻ
ՍԱՐԳՍԻ ԴՈՒՍ
ՏԸՐ ԹՈՒՐՎԱՆ
ՏԱՆ ՈՐ ՀԱՆ
ԳԵԱՒ ԹՎ Ռ (1000 + 551 = 1551)։

Գերեզմանատունին հին քարերուն մէջ պակաս չեն 16րդ եւ 17րդ դարէն մնացորդներ՝ որոնցմէ մէկ քանին կը ներկայացնեմ, զոր օրինակ,

Զողայեցի օհանի որդի Յովհաննէս
ՌԽԱ (1041 + 551 = 1592)։

Աս է հանգիստ Ա
ռաքէլին որդի
Ավդըլէ Թվն
Ռ. Կ. Ը. (1068 + 551 = 1619)
Զուղեց

Այս է Տապան
Ազուլեցի
Շահվերտի
որդի բարս
եղին հնգ.
Թվ. ՌՂԷ (1097 + 551 = 1648)։

—

Բաղէշցի Մհտսի Յովհաննէսի որդի Մարտիրոս ՌԾԺԱ (1111 + 551 = 1662)։

—

Այս է Տապան
Անապատս
ցի խօճա
Անտօնի
Հոգեւոր
որդի է
վային Թվին
ՌԾԺԵ (1115 + 551 = 1666)։

—

Սա է Տապան է
զուլիցի Կիրակոսի
որդի փանոսին
Թվ. ՌԾԺԷ (1117 + 551 = 1668)։

—

Այս է
Տապան
Հանգըս
տեան
Կարբե
ցի Սահ
ակի որ
դի քա
ըսեղի
Ն. Թըվին
ՌԾԺԸ (1118 + 551 = 1669)։

—

Այս է Տապան Հանգ
ըստեան ազուլեցի
Գրիգորի որդի Թու
մասին որ մանուկ
հասակաւ փոխեցաւ
ի Քրիստոս Թվ. ՌԾԻԴ (1124 + 551 = 1675)։

—

Այս է տապան հան
գստեան պէշիքթա
շցի Տէր Ղազարին
որդին, դերձակ տի
բացու արութինին որ
փոխեցաւ առ յոյս
Թվին Հայոց ՌԾԹԻն (1159 + 551 = 1710)։

—

Այս է Տապան հանգիստ
եան մեծ Տէր Աստուածատուրին
Թվ ՌԾԽԹ (1149 + 551 = 1700)
Ապրիլի ԻԳ.

Կարեւոր կը համարիմ մի քանի հատ ալ ներկայացնել 18րդ դարու շիրմաքարերէն, որոնք են՝

Հանգստարանս
Ղալաթիացի
խօյճա Յարութինի
Որդի Հայճի Ակոբին
որ փոխեցաւ ի կեանս Թվ ՌՃՂԵ (1195 + 551 = 1746)
հոկտ. ԺԵ

Այս է Տապան
Հանգըստեան

© National Library of Armenia

Կարուղլացի
խօճայ Յակոբի
դուստր յԷլմաս
խաթունին որ
հանգեաւ թվն ՈՃՂԶ (1196 + 551 = 1747)։

Այս է Տապան
Տէմիրճի յօհան
Նէսի դուստրը
Ուստիեանէին
թվն ՌՄԶ (1206 + 551 = 1757)։

Այս է Տապան
Ագուլեցի յո
վսէփի դուս
տր պալասան
ին թվն ՌՄԻԶ (1226 + 551 = 1777)։

Այս վերջին երեք շիրմաքարերը, գերեզմանատունին չորս բոլորը գոցող պատերուն մէջ հիւսուած են՝ ուրիշ շատ ու շատ տապանաքարերու հետ, որոնցմէ միայն այս երեք Արձանագրութիւնները բացը մնացած, կրնան կարդացուիլ։

Ասոնց առաջինը եօթը տող երկաթագիր փորագրուած է, երկրորդն ու երրորդը բոլորագիր 5 ական տող։ Երեքն ալ գերեզմանատունին արեւելեան շրջապատին դուրսի դին, այսինքն փողոցային երեսին վրայ հիւսուած են։

* * *

Հոն թաղուած են 17ՐԴ դարու մէջ գլխաւուած կամ կախաղանի վրայ մեռած 10—12 նահատակներ, զորս իմ «Շիրմագիր» աշխատութեանս մէջ պիտի ներկայացնեմ լուսանկարներով։

* * *

Թաղուած են նաեւ նշանաւոր եկեղեցականներ, որոնցմէ նշանակելիներն են՝ Ջուղայեցի Յակոբ կաթողիկոս († 1680), Նալեան Յակոբ պատրիարք († 1764), Մեղրեցի Մարտիրոս վարդապետ († 1717), Յովսէփ եպիսկոպոս Առաջնորդ Թօխատու († 1770), Էրզրումցի Կարապետ վարդապետ († 1802) եւ դեռ ուրիշներ։

Ասոնք ունին մարմարեայ խոշոր շիրմաքարեր, երկաթագիր փորագրուած տապանագիրներով, զորս կարեւորը կը համարիմ ներկայացնել հոս, ժամանակին ծախիչ ճիրաններէն փրկելու յոյսով։

Ջուղայեցի Յակոբ կաթողիկոսին շիրիմը փառաւոր է եւ համակ երկաթապատ, վրան եպիսկոպոսական զգեստներ դրուագուած, խմբագ, եմիսորոն, կաթուղիկոսական գաւազան, կոնքեռ ու պատուանշաններ, եւ մէջտեղը փորագրուած՝

Հազար հարիւր քսան եւ ինն
օգոստոս

ունի 12 տող արձանագրութիւն մը, որուն կէսը փորագրուած է շիրմին աջ կամ հարաւային երեսին վրայ, իսկ կէսն ալ ձախ կամ հիւսիսային երեսին վրայ։ Առաջինն է՝

Հանգստարանս այս հրաշափառ եւ սքան-
տուելի
Վայելչադիր յօրինուածովք ի հանդիսի
Ունի աւանդ զմաքուր մարմին բազմերջանկի
Տեառն Յակոբայ Հայոց ընտրեալ Հայրապետի
Որ փոխանորդ Հօր մերոյ Սրբոյ Լուսաւորչի
Կաթուղիկոս օծեալ Նորին օրհնեալ գահի

Երկրորդը՝

Եւ արդ տապանս բուժիչ ախտից մարմնական
Յուսով ի սա դիմեցելոց հրաշիւք յայտնի
Զկազմող սորին յիշել ի Տէր զարմիւք հայցի
Զ.Զաքարիեայն որ ի խալիֆայ հիւսնականի
Հազար հարիւր քսան եւ ինն Հայոց թվի
Երկրորդ աւուր ամսոյն Հոմայ օգոստոսի

Տապանին աջ երեսին վարի անկիւնն ալ փորագրուած է երեք տող յիշատակութիւն մը կաթուղիկոսին մահուան թուականը անգամ մը եւ յայտնող սապէս,

Սբ Հօրս հանգ
ում յեղեր... Ո
ՃԻԹ օգտոսի Ա.

այսինքն 1129 + 551 = 1680։

Մեծ ուխտատեղի է կաթուղիկոսին դամբարանը, ուր ամէն շաբաթ օր ամենակերպ ախտաւորներ կը դիմեն իրենց բուժումը հայցելու։ «Հոգեւոր Տէր» անունով ճանչցուած է այն եւ կ'աւանդուի թէ հին օրերու մէջ գիշեր մը անոր վրայ եղած է ճառագայթագեղ լոյս, զոր մօտակայ թուրք զինուորատնէն նշմարած են ու անոր

գլխին վերեւ բերած կախած են լապտեր մը։ Մինչեւ վերջի ժամանակներս կը վառէին զայն ամէն գիշեր իւղն ալ իրենցմէ ըլլալու պայմանաւ։

Հոգեւոր Տիրոջ տապանագիրը հրատարակուած է առաջին անգամ 1878ին, Վիեննայի Մխիթարեան Տպարանէն լոյս տեսած, Հ. Ադէքսանդր Վ. Պալճեանի՝ «Պատմութիւն Կաթողիկէ Վարդապետութեան ի Հայս եւ Միութիւն նոցա ընդ Հռովմէական եկեղեցւոյ» անուն երկասիրութեան մէջ (էջ 164—165), բայց ոչ ամբողջութեամբ. զայն վերջն ատեններս ուրիշներ ալ հրատարակեցին, բայց միշտ մոռացութեան տալով կաթուղիկոսին մահուան թուականը յայտնող յիշատակութիւնը։

* * *

Էջմիածնի կաթողիկոս էր տա, նշանաւոր կաթողիկոս մը, որ ճանչցուած է Յակոբ Գրդ անունով. ծնած էր Ջուղա[1]։

Իր մասին գրողներ շատ եղած են, ես բաւ կը համարիմ անոր կեանքին քանի մը գլխաւոր թուականները հոս նշանակել։

1654ին շինած է Նախավկայի վանքը[2]. ընդհանուր Հայոց Հայրապետ օծուած է՝ 8 ապրիլ 1655ին Ծաղկաձորի տօնի օրը[3]։

Հայ տպագրութեան ծաղկումին մեծապէս ջանադիր եղած է ու շատ սատարած։

1644ին գրած է թուղթեր ընդդէմ Եղիազար Այնթապցիին[4], որ ապօրինի կերպով ինքզինքը կաթողիկոս օծել տուած էր Երուսաղէմի մէջ։ Եւ այս ապօրինաւորութեան վերջ դնելու համար Յակոբ կաթողիկոս մինչեւ իսկ ցամաքի ճամբով Երուսաղէմ կ'երթայ 1655ին[5], կը ջանայ համոզել զԵղիազարը, բայց օգուտ մը չունենար։

Բաւական ատեն Երուսաղէմ մնալէ յետոյ, Կ. Պոլիս կու գայ 1667ին եւ կ'երթայ Ադրիանուպոլիս այցելել Սուլթանին[6]։

Կը վերադառնայ Էջմիածին եւ 1679 դեկտեմբերին, հակառակ իր ալեւոր տարիքին, երկրորդ անգամ ըլլալով կու գայ Կ. Պոլիս[7], մեծանուն Իսրայէլ Օրիի ու Ղարապաղի մէկ քանի Հայ Մելիքներուն հետ եւ նպատակն էր ազգային ազատութեան հարցին յաջողութեանը համար եւրոպական արքունիքները երթալ — աղաչել. բայց չի յաջողիր, որովհետեւ ծերութիւնը, ճամբորդութեան յոգնութիւնները, գուցէ հիւանդութիւն մ'ալ արգելք կ'ըլլայ անոր այդ նպատակին, ու քանի մը ամիս յետոյ կը վախճանի՝ 2 օգոստոս 1680ին[1], ուրեմն տարեկան հասակին մէջ. կը թաղուի պերա գերեզմանատունը։ Յակոբ կաթողիկոս իրաւամբ նկատուած է իբր ռահվիրայ հայկական ազատագրութեան, ինչպէս կը գրէր «Իրազեկ» 1928ին[2]։

Սարգիս Դպիր Սարաֆ Յովհաննէսեան իր պոլսական տեղագրութեան մէջ (ձեռագիր) երբ Ղալաթիոյ եկեղեցիին վրայ կը խօսի, հաբեւանցի կերպով մը պերա գերեզմանատունի մասին ալ գրելով, կը յիշատակէ նաեւ այս Յակոբ կաթողիկոսը՝ սապէս,

«Գերեզմանատուն Ժողովրդեան այսր եկեղեցւոյ (Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչի) է ի պէկօղլին, որ է վայր զուարճալի եւ ծովահայեաց։ Ուր գոն գերեզմանք երեւելի արանց բազմաց եւ մանաւանդ Յակոբայ կաթողիկոսին Ջուղայեցւոյ, որ վկնի գալոյ նորա ի Կոստանդինուպոլիս եւ մնալոյ ամիս եօթն ի նմա, վախճանեցաւ ի Թուականին ՌՃԻԹ, յամի Տեառն 1680 յօգոստոսի երկու, գոլով ամաց ութսուն եւ երկուց»։

«Նաեւ շիրիմ Յակոբայ պատրիարքին Ըստամպոլու զիմառացւոյ՝ նալ օղլի կոչեցելոյ, որ վախճանեցաւ ի Թուականին ՌՄԺԳ յուլիսի ԺԸ, յամի Տեառն 1764։ Յեկեղեցւոջ Սուրբ Ստուածածնին, որ ի Գում Գաբուն, գոլով ամաց վաթսուն եւ երից»։

(Շարունակ. կայի.) ԴԿՏ. ՎԱՀՐԱՄ Ե. ԹՈՐԳՈՄՆԱՆ

[1] Ա—ՀԷԼ Դ—ՇԷՀԷՅԷ պարտ. Ամենալեսամ, էջ 339, 340 եւ 425։
[2] Զարէհան պարտ. Հայոց, Հատոր Գ. էջ 647։
[3] Անդ, էջ 657։
[4] Անդ, էջ 703։
[5] Անդ, էջ 707։
[6] Անդ, էջ 714։
[7] Անդ, էջ 718. եւ Պարտ. Հայ Տպագրութեան, Լէօր, Թիֆլիս Ա. Հատոր, էջ 149։

[1] Զարէհան պարտ. Հայոց, Հատոր Գ. էջ 719։
[2] Հայրենիք Ամսաթերթ, Ամերիկա, Թիւ 3, յունվար 1928, էջ 81—93։

© National Library of Armenia